**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԱՍՀՆ-ՇՀԱՇՁԲ-17/20-Բ-ԲՍՓ»**

ք. Երևան «15» մայիս 2017թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բլանկիրատ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Կիրակոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագրից կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը. Կատարողի կողմից պայմանագրի խախտումն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը

փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև էլեկտրոնային փոստերի համակարգի միջոցով` կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն`

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային փոստերի համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման` գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված` պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը,

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում էլեկտրոնային փոստերի համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման` գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված` պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Աշխատանքը չընդունելու դեպքում` սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային փոստերի համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 2569792.51 (երկու միլիոն հինգ հարյուր վաթսունինը հազար յոթ հարյուր իննսուներկու դրամ հիսունմեկ լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը` այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ` դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման ընդունման արձանագրության հիման վրա` սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման` սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք` սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ` կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը դեմ պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը.

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է, ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի  կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման.

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի  կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի աշխատանքային էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նաև

Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 01506515
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011036010

Աշխատակազմի
ղեկավար ______________ Ա. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Բլանկհրատ» ՓԲԸ

ք. Երևան, Պարույր Սևակ 47
ՀՎՀՀ 00804213
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052022195771001

Տնօրեն ______________ Է. Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1
«15» մայիս 2017թ. Կնքված
N «ԱՍՀՆ ԸՀԱՇՁԲ-17/20-Բ-ԳԼՓ» ծածկագրով գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Չ/Բ | Ապրանքի անվանումը | Տպագրման եղանակը | Հիմնական չափսերը | Թղթի տեսակները | Քանակը /հատ/ | Միավորի գինը | Ընդամենը Գումար |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ձևաթուղթ-1 | Օֆսեթային, 1 գույնով, միակողմանի, 7 տեսակի | A4 | Օֆսեթային, 80 գ/մ2 | 3949 | 4.79 | 18915.71 |
| 2 | Ձևաթուղթ-2 | Օֆսեթային, 1 գույնով, երկկողմանի, 7 տեսակի | A4 | Օֆսեթային, 80 գ/մ2 | 74471 | 4.8 | 357460.8 |
| | Ձևաթուղթ-3 | Օֆսեթային, 1 գույնով, երկկողմանի | A4 | Օֆսեթային, 160 գ/մ2 | 22000 | 8.94 | 196680 |
| 3 | Ձևաթուղթ-5 | Օֆսեթային, 1 գույնով, երկկողմանի, 3 տեսակի | Մեկ ձևաթուղթը բաղկացած է 6 հատ A4 երկկողմանի թերթից | Օֆսեթային, 80 գ/մ2 | 1000 | 20 | 20000 |
| 5 | Ձևաթուղթ-8 | Օֆսեթային, 1 գույնով, երկկողմանի /կրկնակի համարակալված/, 2 տեսակի | A5 | Օֆսեթային, 220 գ/մ2 | 78000 | 6 | 468000 |
| 7 | Ձևաթուղթ 9 | Օֆսեթային, 1 գույնով, երկկողմանի, 2 տեսակի | A3 | Օֆսեթային, 80 գ/մ2 | 84000 | 7.92 | 665280 |
| 8 | Ծրար՝ ԲԱՓ գործակալության տվյալներով | Օֆսեթային, 1 գույնով, միակողմանի | (225մմ-115մմ) | Օֆսեթային, 80 գ/մ2 | 2000 | 12 | 24000 |

| Ապրանքի անվանումը | Տպագրման եղանակը | Հիմնական և չափսերը | Էջերի թղթի տեսակները | Կազմարարության եղանակը | Կազմի թղթի տեսակը | Թերթերի քանակը | Գինը | Քանակը /հատ/ | Միավորի գինը | Ընդամենը Գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գրանցամատյան-1 | Օֆսեթային, 1 գույնով, 5 տեսակի | 60X84/8 | Օֆսեթային, 70 գ/մ2 | թելակար, ջերմասոսնձված, կնիքի համար նախատեսված կապերով | Ստվարաթուղթ՝ 1500գ/մ2, լիդերինապատ | 200թ | հորիզոնական | 369 | 1200 | 442800 |
| Գրանցամատյան 2 | Օֆսեթային, 1 գույնով, 3 տեսակի | 60X84/8 | Օֆսեթային, 70 գ/մ2 | թելակար, ջերմասոսնձված, կնիքի համար նախատեսված կապերով | Ստվարաթուղթ՝ 1500գ/մ2, լիդերինապատ | 200թ | ուղղահայաց | 86 | 1200 | 103200 |
| Գրանցամատյան-3 | Օֆսեթային 1 գույնով, 7 տեսակի | 60X84/8 | Օֆսեթային, 70 գ/մ2 | թելակար, ջերմասոսնձված, կնիքի համար նախատեսված կապերով | Ստվարաթուղթ՝ 1500գ/մ2, լիդերինապատ | 100թ | հորիզոնական | 127 | 792 | 100584 |
| Գրանցամատյան-4 | Օֆսեթային, 1 գույնով | 60X84/8 | Օֆսեթային, 70 գ/մ2 | թելակար, ջերմասոսնձված, կնիքի համար նախատեսված կապերով | Ստվարաթուղթ՝ 1500գ/մ2, լիդերինապատ | 100թ. | ուղղահայաց | 60 | 792 | 47520 |
| Գրանցամատյան-5 | Օֆսեթային, 1 գույնով, 6 տեսակի | 60X84/8 | Օֆսեթային 70 գ/մ2 | թելակար, ջերմասոսնձված, կնիքի համար նախատեսված կապերով | Ստվարաթուղթ՝ 1500գ/մ2, լիդերինապատ | 50թ | հորիզոնական | 83 | 720 | 59760 |
| Գրանցամատյան-6 | Օֆսեթային, 1 գույնով | 60X84/8 | Օֆսեթային, 70 գ/մ2 | թելակար, ջերմասոսնձված, կնիքի համար նախատեսված կապերով | Ստվարաթուղթ՝ 1500գ/մ2, լիդերինապատ | 50թ | ուղղահայաց | 25 | 720 | 18000 |
| Գրանցամատյան-7 | Օֆսեթային, 1 գույնով, 2 տեսակի | 60X84/8 | Օֆսեթային, 70 գ/մ2 | թելակար, ջերմասոսնձված, կնիքի համար նախատեսված կապերով | Ստվարաթուղթ՝ 1500գ/մ2, լիդերինապատ | 30թ. | հորիզոնական | 11 | 720 | 7920 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գրանցամատյան-8 | Օֆսեթային. 1 գույնով | 60X84/8 | Օֆսեթային. 70 գ/մ2 | թելակար, ցերմասոսնձված, կճիկի համար նախատեսված կապերով | Ստվարաթուղթ՝ 1500գ/մ2, վինիլիտապատ | 30թ. | ուղղահայաց | 57 | 696 | 39672 |

*ծցամատյանների թերթերը պետք է լինեն համարակալված,*

*պամաններ՝ Տպագրությունը կատարվում է Պատվիրատուի կողմից տրված նմուշների օրինակով*

սատրողը աշխատանքի արդյունքը մատակարարում է պատվիրատուի նշված հասցեում: Աշխատանքները պետք է կատարվեն 2-րդ – 4-րդ յակներում՝ ըստ Պատվիրատուի պահանջի:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար............... Ա. Գրիգորյան
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
« Բյանկիրատ» ՓԲԸ

Տնօրեն................ Է. Կարապետյան
Կ.Տ.

*Հավելված 2*
«15» մայիս 2017թ. կնքված
N «ԱՍՀՆ-ՇՀԱՊՁԲ-17/20-Բ-ԲՍՓ» *ծածկագրով գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ այդ թվում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 9-11, 13, 16-26 | Տպագրական աշխատանքներ | | | | | | | 1285000 | 1285000 | 1285000 | 2569792.51 | 2569792.51 | 2569792.51 | 2569792.51 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար .................... Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Բլանկիրատ» ՓԲԸ

Տնօրեն .................... Է. Կարապետյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
«______»________________20 թ. կնքված
N ________ ծածկագրով գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
| --- | --- |
| ________________________ | ________________________ |
| __________ ____________ | ______________ ________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ______________ |
| ՀՀ ______________________ | ՀՀ________________________ |
| ________________________ | ________________________ |
| ՀՎՀՀ ____________ ____ | ՀՎՀՀ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____ ________________________________________ ____________________

__________________________ ______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «______ » 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս _________________________________________________. և Պայմանագրի կողմը՝ ի դեմս ____________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____ » 20 թ. կազմված՝ գնման հայտը ներկայացրած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը ըստ վճարման ժամանակացույցի |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
| --- | --- |
| ________________________ | ________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ________________________ | ________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«   »  ____________ 20  թ. կնքված*
*N ______________  ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ---------------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և

(Պատվիրատուի անունը)

--------- ------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20   թ. ------ -ին կնքված N -------------

(Կատարողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20   թ. --------- — -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին **հանձնեց** ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն